# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 9
## 22 հունվարի 2020թ.-ին կնքված N «ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-20/2-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք.Երևան «17» հունվարի 2022թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Քրոսնեթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ալեքսանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար՝ Հ. Մարտիրոսյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), երեքը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-20/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. *Համաձայնագրի առարկան*

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1 Հաշվի առնելով, որ 2022թ. պետական բյուջեով հատկացվել է 3 654 000 (երեք միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը և վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2022թ-ի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 31-ը:

### 2. *Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ԳՆՈՐԴ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>ՀՀ 900011024040<br>ՀՎՀՀ 02505554 | «Քրոսնեթ» ՍՊԸ<br>ք. Երևան, Նալբանդյան 28<br>ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 16048097516001<br>ՀՎՀՀ 01834381 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին<br>ք. Երևան,Կորյունի 15<br>ՀՎՀՀ 02678934 |
| ---------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ---------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ---------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
*«22 » հունվարի 2020թ. կնքված*
*ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի*
*« 17 » հունվարի 2022թ. կնքված N 9 Համաձայնագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը* |
| 1 | 64211100-2 | Հանրային հեռախոսային ծառայություններ՝ (Համաձայն աղյուսակ N1-ի) | դրամ | 3 654 000 | 1 | ներկայացված է ստորև՝ աղյուսակ N2-ում | 01.01.2022թ.-31.12.2022թ. |

** վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

**ԳՆՈՐԴ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քրոսսնեթ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28
ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 16048097516001
ՀՎՀՀ 01834381

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ**

Բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմին
ք. Երևան, Կորյունի 15
ՀՎՀՀ 02678934

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Աղյուսակ № 1

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

նկարագրություն

1. Օպերատորը պետք է ապահովի բաժանորդի տարածքում գտնվող թվով 35 հատ (պատվիրատուի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում փոփոխման հնարավորությամբ) ներքին հեռախոսների համար ֆիքսված հեռախոսակապի ծառայություն, որը պետք է համատեղելի լինի այլ վարչական շրջանների ներքին հեռախոսահամարների հետ և գործի անվճար:

2. Բաժանորդի արտաքին համարները պետք է լինեն 27 հատ, միաժամանակ առնվազն 2 զանգ կատարելու հնարավորությամբ, որոնք բաժանորդը կարող է ընտրել տրամադրված համարների տիրույթից և անհրաժեշտության դեպքում ավելացնել:

3. Բաժանորդի Երևան քաղաքի արտաքին համարներից թվով 7 համարները ցանկալի է լինեն միմյանց հաջորդական:

4. Մատուցվելիք ծառայություններ ցանկը ներկայացվում է ստորև, ինչպես նաև գնային առաջարկին կից ցանկով:

| **Հիմնական ծառայությունները** | **միավորի գինը /Չափման միավորը** |
|---|---|
| Բաժանորդավճար մեկ հեռախոսահամարի համար(Բաժանորդավճարի շրջանակում անվճար տեղական և միջքաղաքային զանգեր օպերատորի ամրակցված ցանցում 300 րոպե) | 1800 (ՀՀ դրամ) |
| Օպերատորի ամրակցված ցանցում տեղական և միջքաղաքային զանգեր բաժանորդավճարի շրջանակում անվճար րոպեների սպառումից հետո | 5 (ՀՀ դրամ/րոպե) |
| Տեղական և միջքաղաքային զանգեր Հայաստանի ֆիքսված այլ ցանցեր | 4 (ՀՀ դրամ/րոպե) |
| Արցախի Հանրապետություն ֆիքսված ցանցեր | 10 (ՀՀ դրամ/րոպե) |
| ՀՀ շարժական բջջային կապի բոլոր ցանցեր (100 րոպեի արժեք) | 1800 (ՀՀ դրամ/100րոպե) |
| Արցախի Հանրապետություն շարժական բջջային կապի ցանց | 18 (ՀՀ դրամ/րոպե) |
| **Ընդամենը՝** | **3637** |

5. Բաժանորդի կողմից սպասարկող օպերատորի ցանցում ներքին զանգերը պետք է լինեն անվճար:

6. Օպերատորի կողմից Պատվիրատուի տարածքում պետք է անվճար տեղադրվեն, կարգաբերվեն և գործարկվեն բոլոր անհրաժեշտ սարք-սարքավորումները՝ բացառությամբ հեռախոսային սարքավորումների, որոնք պայմանգրի ժամկետի ավարտից հետո կդառնան Պատվիրատուի սեփականությունը, տրամադրվեն և անցկացվեն անհրաժեշտ կապուղիները: Բոլոր անհրաժեշտ սարք սարքավորումների տեղադրումը, փորձարկումը, թերությունների վերացումը և համակարգի վերջնական գործարկումը պետք է լինի ոչ ուշ, քան ծառայության մատուցումից 10 աշխատանքային օր առաջ:

7. Օպերատորը պետք է ապահովի տրամադրվող ծառայության անխափան աշխատանքը (Dual path redundant Service, UPS):

8. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 4 (չորս) ժամը:

9. Օպերատորը պետք է տրամադրի Վեբ-ինտերֆեյսի՝ միջոցով պատվիրատուի հեռախոսազծերի հեշտ և օպերատիվ կառավարման և վերահսկման

հնարավորություն (ծառայությունների ակտիվացում, զանգերի ձայնագրություն և զանգերի վերծանման առցանց հնարավորություն ցանկացած պահի), ինչպես նաև կառավարի ծառայությունից օգտվողների իրավունքները:

10. Օպերատորի կողմից տրամադրվող ներքին հեռախոսակայանը պետք է օժտված լինի VOIP տեխնոլոգիայի բոլոր հիմնական հատկություններով (Call Transfer, Call Parking, Caller ID, Conference Call, Video call, etc.)

11. Օպերատորը ԱՀԿ-ի միջոցով պետք է միացնի առանձնացված ստորաբաժանումները, և ապահովի նրանց հասանելիությունը միմյանց հետ՝ անկախ գտնվելու վայրից:

12. Օպերատորը պետք է տրամադրի անսահմանափակ SIP trunk-երի հնարավորություն, 24/7 ռեժիմով աշխատող տեխնիկական և ծրագրային առանձնացված օպերատորով սպասարկում, յուրաքանչյուր գիշեր ավտոմատ կերպով ԱՀԿ-ի Backup կատարելու հնարավորություն:

13. Սպասարկվող հեռախոսահամարները կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա:

14. Ավտոմատ հեռախոսային կայանի (ԱՀԿ) կարգաբերման և IVR ձայնային ողջույնի ձայնագրման հնարավորություն:

15. **Սպասարկման ծառայություն**

Հարկային հաշիվների և կատարողական բոլոր փաստաթղթերի ներկայացումը, ոչ ուշ քան ծառայությունների մատուցման ամսվան հաջորդող ամսվա մինչև 15:

Անհրաժեշտության դեպքում՝ ըստ պահանջի պետք է տրամադրվի հաշվի մանրամասնումը՝ վերծանումը և յուրաքանչյուր հեռախոսահամարի հաշվետու ամսվա ընթացքում սպառած րոպեների քանակը՝ ըստ համապատասխան սակագների: Վերծանումը պետք է տրամադրվի միայն կազմակերպության լիազորված անձին:

Ծառայության մատուցումը և սպասարկումը պետք է իրականացվի համապատասխան ՀՀ Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի:

16. **Այլ պայմաններ:**

Ծառայություն մատուցողը պետք է պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ խոսակցության փաստը, զանգողի և զանգը ստացողի ինքնությունը և նրանց գտնվելու վայրերը) և հեռախոսացանցով անցնող այլ հաղորդումների պարունակությունը և չպետք է գրանցի կամ պահպանի այդ տվյալները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ դատարանի որոշման համաձայն:

*17. Պարտադիր պահանջ՝*

** Ծառայություն մատուցող ընտրված մասնակիցը պետք է ունենա հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցություն) բնագավառի լիցենզիա:*

| ԳՆՈՐԴ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ,<br>Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024040<br>ՀՎՀՀ 02505554 | «Քրոսսնեթ» ՍՊԸ<br>ք. Երևան, Նալբանդյան 28<br>ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ<br>Հ/Հ 16048097516001<br>ՀՎՀՀ 01834381 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին<br>ք. Երևան, Կորյունի 15<br>ՀՎՀՀ 02678934 |
| (ստորագրություն)<br>Կ.Տ. | (ստորագրություն)<br>Կ.Տ. | (ստորագրություն)<br>Կ.Տ. |

Աղյուսակ № 2

Ծառայության մատուցման հասցեներ

| Հ/Հ | Ստորաբաժանման անունը | Ծառայության մատուցման հասցե | Անհրաժեշտ հեռախոսահամարների թիվը /արտաքին համար |
|---|---|---|---|
| 1 | Տեսչական մարմնի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ և Երևանի տարածքային բաժին | ք. Երևան, Կորյունի 15 | 16 |
| 2 | Լաբորատոր հետազոտությունների բաժին | ք. Երևան, Այգեձորի 1-ին նրբանցք, շենք 22 | 1 |
| 3 | Արագածոտնի տարածքային բաժին | Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Երևանյան 47 | 1 |
| 4 | Արարատի տարածքային բաժին | Արարատի մարզ, Վեդի, Թումանյան 6 | 1 |
| 5 | Արմավիրի տարածքային բաժին | Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Նար Դոսի 1, բն, 36 | 1 |
| 6 | Գեղարքունիքի տարածքային բաժն | Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Շահումյան 2 | 1 |
| 7 | Լոռու տարածքային բաժին | Լոռու մարզ, ք. Վանաձոր, Բաթումի 26-1/1 | 1 |
| 8 | Կոտայքի տարածքային բաժին | Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1 | 1 |
| 9 | Շիրակի տարածքային բաժին | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 46/1 | 1 |
| 10 | Սյունիքի տարածքային բաժին | Սյունիքի մարզ, ք. Կապան, Մելիք-Ստեփանյան 3/1 | 1 |
| 11 | Վայոց ձորի տարածքային բաժին | Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացու 18/1 | 1 |
| 12 | Տավուշի տարածքային բաժին | Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության 1 | 1 |

**ԳՆՈՐԴ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քրոսնեթ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28
ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 16048097516001
ՀՎՀՀ 01834381

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ**

Բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմին
ք. Երևան, Կորյունի 15
ՀՎՀՀ 02678934

(ստորագրություն)
Կ.Տ.